Կանգար Տուրնեֆորի
Gurdelia tournefortii

Միջերկրածովային կրիա
Testudo graeca

Լուսանկարները՝
Ս. Հովսեփյանի

տնային բվիկը, ներկարարը, սովորական այծկիթը, ճեղագռավը և այլն:

Կաթնասուններից տարածված են աղվեսը, աքիսը, գայլը, գորշուկը և այլ կենդանիներ:

Դեռևս 70-ականների կեսերին ամենից հաճախ հանդիպող կենդանիներից էր քարակզաքիսը, որը նույնիսկ ընտանի աղավնիներ էր որսում: Ներկայումս կզաքիսներն արգելոցում հազվադեպ են հանդիպում, առավել հազվադեպ կենդանիներից են գայլը և փորսուղը:

Մեծ թվաքանակ է կազմում սովորական դաշտամուկը, հազվագյուտ կենդանի է ձյունաքույր դաշտամուկը: Բացի այդ, արգելոցում են ապրում պարսկական և Վինոգրադովի ավազամկները, անտառամուկը:

Էրեբունի արգելոցի տեսարան
Լուսանկարը՝ Ս. Հովսեփյանի

Էրեբունի արգելոցի տեսարան
Լուսանկարը՝ Ս. Հովսեփյանի

Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

http://picasaweb.google.com

Կապար փշոտ - Capparis spinosa

AWHHE

0019, ՀՀ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ,
սենյակ 609

Հեռ. (+374-1)-52 36 04
office@awhhe.am
www.awhhe.am

Հայ կանայք
հանուն առողջության
եւ առողջ շրջակա
միջավայրի ՀԿ
www.awhhe.am

Հայաստանի արգելոցներ

Էրեբունի

Էրեբունի արգելոցի տեսարան
Լուսանկարը՝ Ս. Հովսեփյանի

Էրեբունի արգելոցի տեսարան
Լուսանկարը՝ Ս. Հովսեփյանի

Հիմնադրումը՝ 1981թ.
Տարածքը՝ 89 հա
Տեղադրությունը՝ Կոտայքի մարզ
Նպատակը՝ հացազգիների վայրի ազգակիցների պահպանություն

Արգելոցը գտնվում է Երևանից ընդամենը 8-10 կմ հեռավորության վրա, Մուշաղբյուր և Գեղադիր գյուղերի միջև: Այն տեղակայված է ծովի մակերևույթից 1300 – 1400 մ բարձրության վրա և գտնվում է կիսաանապատային և լեռնատափաստանային գոտիների անցումային հատվածում:

Էրեբունի արգելոցն ամենափոքրն է հանրապետության 3 արգելոցներից: Միևնույն ժամանակ դա վայրի հացազգիների եզակի գենոֆոնդի պահպանման ամենամեծ օջախն է աշխարհում:

Արգելոցի ոչ մեծ տարածքում գրանցվել են 278 տեսակի բարձրակարգ բույսեր, որոնք պատկանում են 176 ցեղի և 42 ընտանիքի: Տեսակների քանակով հատկապես աչքի են ընկնում հետևյալ ընտանիքները՝ աստղածաղկազգիները /54 տեսակ/, բակլազգիները /27/, հացազգիները /27/: Արգելոցի բուսական աշխարհի 7 տեսակ գրանցված է Հայաստանի և ԽՍՀՄ Կարմիր գրքերում:

Լուսանկարը՝
Ս. Հովսեփյանի

Արգելոցի զարդն են համարվում վայրի ցորենները: Աշխարհում հայտնի վայրի ցորենների չորս տեսակից արգելոցում աճում է երեքը՝ վայրի միահատիկ, վայրի Ուրարտու և վայրի երկհատիկ /վերջինս կոչվում է նաև Արարատյան ցորեն կամ վայրի հաճար/: Վայրի Ուրարտու և երկհատիկ ցորենները հայտնաբերվել և նկարագրվել են Հայաստանում: Այդպիսի ցորեններին բնորոշ է ներտեսակային մեծ բազմազանությունը: Դրանց տեսակները հաշվվում են տասնյակներով:

Արգելոցում վայրի հացազգիներից աճում են նաև միամյա աշորան կամ Վավիլովի աշորան, այծակնի և գարու մի քանի տեսակ, ինչպես նաև շատ հազվագյուտ անքիստ բթաթեփուկը և արևելյան արմատագլխիկը:

Արգելոցում աստղածաղկազգիներից աճում է Տուրնեֆորի կանգար տեսակը, բակլազգիներից՝ խոշորածածկոց ակտինոլեման և անցողուն հոհենակերիան:

Արգելոցի կենդանական աշխարհը հատուկ չի ուսումնասիրվել: Համաձայն Ս.Մ. Յաբլոկովի,

Triticum urartul
Ուրարտու վայրի ցորեն

Triticum araraticum
Արարատյան ցորեն

Լուսանկարները՝ Ս. Հովսեփյանի

էրեբունի արգելոցում հանդիպում են բզեզների հազվագյուտ տեսակներ՝ փայտաբզեզ և մշկաբզեզ, ցատկաբզեզ, նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում գրանցված գնայուկը:

Գրանցված է 17 տեսակի սողուն՝ մեկ մողեսակերպ օձ, գյուրզա, սահնօձի տարբեր տեսակներ, արևմտյան վիշապիկ, բազմագույն, դեղնականաչ և դեղնափորիկ փոքր վիշապօձեր, դեղնափորիկ (անոտ մողես), անդրկովկասյան և Շտրաուխի մողեսիկներ, զոլավոր և միջին չափի մողեսներ, շատ հազվադեպ դարձած ոսկեգույն մաբույա, որն ապրում է բուսականությունից զուրկ,

Կաքավ մոխրագույն - Perdix perdix

Սովորական հողմավար բազե - Falco tinnunculus

մերկ ժայռերի խոշոր քարաբեկորներում, քարանձավների քարքարոտ լանջերին, քարակույտերում և այլուր: Մաբույայից բացի, համեմատաբար խիտ խոտածածկույթով քարքարոտ չոր լանջերին և ֆրիգանոիդ (լեռնաանապատային) բուսականության մեջ հանդիպում է վառ գունավորում ունեցող երկարոտն սցինկը: Երկկենցաղներից հանդիպում են կասպիական կրիան, լճագորտը, կանաչ դոդոշը, փոքրասիական ծառագորտը:

Թռչնաշխարհը բավական բազմազան է, սակայն չկան ստույգ տեղեկություններ բնավորվող տեսակների մասին: Արգելոցում հանդիպում է մոտ 50 տեսակի թռչուն, որոնցից ուշագրավ են լորը, մոխրագույն կաքավը, սովորական տատրակը, սովորական մկնաբազեն, տափաստանային ճերմակաբազեն (մկնաբազե), մկնաճուռակը,

Սովորական ծառագորտ
Hyla arborea